ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1, 1952 Общественные науки

ԼՐԱՏՈՒ

ԴԻՍԿՈՒՍԻԱ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԵՐԻՈԴԻԶԱՑԻԱՅԻ ՀԱՐՑԻՆ

1951 թ. նոյեմբերի 26-ից մինչև դեկտեմբերի 21-ը տեղի ունեցան Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի գիտական խորհրդի մի քանի նիստեր, որտեղ քննարկվեց հայ ժողովրդի պատմության պերիոդիզացիայի հարցը։ Նիստերին մասնակցում էին պատմաբաններ, գրականագետներ, արվեստի և գիտության այլ բնագավառի աշխատողներ, ուսուցիչներ, ուսանողներ։ Նիստերում ծավալվեց մտքերի աշխույժ փոխանակություն, որին մասնակցեցին 13 ընկերներ։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, Պատմության ինստիտուտի դիրեկտոր, պրոֆ. Ար. Հովհաննիսյանը, բաց անելով գիտական խորհրդի նիստը, ասաց. Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» հանճարեղ աշխատության լույսի տակ պետք է քննենք հայ ժողովրդի պատմության համար մեծ կարևորություն ունեցող պերիոդիզացիայի հարցը։ Այդ խնդրին ձեռնամուխ ենք լինում, որովհետև հիմա մեր ձեռքի տակ ունենք Կարմիր բլուրի և Գառնիի հնագիտական պեղումների արդյունքները, հրատարակվել են նոր բնագրեր, հայ ժողովրդի պատմության ձեռնարկը, առանձին մոնոգրաֆիաներ հայ ժողովրդի հարևան երկրների՝ Վրաստանի, Միջին Ասիայի պատմությանը վերաբերող և այլն։ Մեր ուսումնասիրության հիմքում ընկած է մարքս-լենինյան ուսմունքը հասարակության զարգացման մասին։ Այդ ուսմունքի լույսի տակ ի՞նչպես ենք կարողանում լուսաբանել հայ ժողովրդի պատմության առանձին հարցերը, այստեղ է, որ հանդիպում ենք տարակարծիքություններին։ Այդպիսի հարցերից է օրինակ՝ ստրկատիրական ֆորմացիայի, ֆեոդալիզմի գենեզիսի և նրա զարգացման էտապների հարցերը և այլն։

Հայ ժողովրդի պատմության նախակապիտալիստական շրջանին վերաբերող երկու հոդված է լույս տեսել մամուլում, մտքերի փոխանակության կարգով. դրանք են՝ ընկ. ընկ. Ս. Երեմյանի և Ս. Հակոբյանի հոդվածները, որոնք դառնալու են մեր դիսկուսիայի քննության առարկան։[1]

Պրոֆ. Ար. Հովհաննիսյանի բացման խոսքից հետո ձայնը տրվում է դոցենտ Ս. Երեմյանին։ Ընկ. Երեմյանն իր թեզերը ծանոթացնելուց առաջ կանգ է առնում քննության ենթակա հարցի պատմության վրա, հիշատակում այն գիտնականներին (ակադ. Հ. Մանանդյան, պրոֆ. Խ. Սամվելյան), որոնք առաջին անգամ ուշադրություն են դարձրել հայ ժողովրդի տնտեսական կյանքի պատմության վրա, ապա խոսում է վերջին տարիներում Վրաստանում, Ադրբեջանում, Միջին Ասիայում, Իրանում, Սիրիայում, Պաղեստինում կատարված պեղումների մասին, որոնք հսկայական նյութ են տալիս պատմաբաններին։ Հետաքրքիր և արժեքավոր ուսումնասիրություններ են տվել սովետական նշանավոր պատմաբաններ Ս. Տոլստովը, Կ. Տրեվերը, Ա. Յակուբովսկին և ուրիշները Միջին Ասիայի ժողովուրդների հելլենիստական շրջանի պատմության վերաբերյալ։ Այս բոլոր նյութերն օգնում են մեզ՝ լուսաբանելու մեր ժողովրդի պատմության հնագույն շրջանը։

Ընկ. Երեմյանը մանրամասն խոսելով Արտաշեսյան շրջանի մասին, այն բնութագրում է որպես հելլենիստական շրջան, որը հատուկ էր Մերձավոր Արևելքի երկրներին և հանդիսանում էր ստրկատիրական ֆորմացիայի առանձին փուլը։ Ընկ. Երեմյանը նշում է, որ հելլենիզմի ծաղկման շրջանին հետևում է հայ ժողովրդի պայքարը Հռոմի և Իրանի դեմ՝ մեր դարաշրջանի առաջին դարերում, որը սոցիալ-տնտեսական զարգացման տեսակետից բնորոշվում է

---

[1] С. Т. Еремян. Опыт периодизации истории Армении эпохи феодализма („Вопросы истории", 1951, № 7, էջ 52—73). Ս. Հակոբյան—«Հայ ժողովրդի ֆեոդալական շրջանի պատմության պերիոդիզացիայի հարցի շուրջը» (Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» 1951, № 8, էջ 29—46).

իբրև ուշ հելլենիստական շրջան, երբ ստրկատիրական հասարակակարգի ընդերքում ձևավորվում էին՝ ֆեոդալական հարաբերությունները։ Այս վիճակը տևում է մինչև Արշակունիների անկումը։ Ընկ. Երեմյանը հաջորդ շրջանը (3—8-րդ դարերը) համարում է վաղ ֆեոդալական։ Այս շրջանի հիմնական էտապներն են.

1. 3—4-րդ դարեր— նախարարական հասարակության կազմավորում։

2. 5—7-րդ դարեր— նախարարական սիստեմի տնտեսական և քաղաքական իշխանության տիրապետությունը։

3. 8-րդ դար— նախարարական սիստեմի անկում (արաբական տիրապետություն)։

Հաջորդ շրջանը նա համարում է զարգացած ֆեոդալիզմի շրջան (9—13-րդ դարերը) չորս էտապներով.

1. 9-րդ դար— ժողովրդա-ազատագրական շարժում ընդդեմ արաբների և հայ պետականության վերականգնումը։

2. 886—1045 թթ. Շիրակի Բագրատունիների քաղաքական սիստեմը։

3. 1050—1150 թթ. հայ ֆեոդալիզմի ճգնաժամը (թյուրք-սելջուկների տիրապետություն)։

4. 1150—1235 թթ.— հայկական ֆեոդալիզմի վերածնունդը և հետագա զարգացումը։

Այնուհետև գալիս է ֆեոդալիզմի տևական և սիստեմատիկ կործանման ու լ'կ'իդացիայի շրջանը (13-րդ դարի 70-ական թվականներից մինչև 19-րդ դարը) իր վեց էտապներով։[1]

Ապա ելույթ է ունենում դոցենտ Ս. Հակոբյանը։ Նա նշում է, որ հայ ժողովրդի պատմության մեջ չենք կարող նկատել ստրկատիրական ֆորմացիա, չնայած ստրկություն եղել է և տևել բավական երկար ժամանակ։ Քսենոֆոնի նկարագրած Հայաստանը 5-րդ դարի վերջից (Ն. մ. թ.) մենք բնորոշում ենք գյուղական համայնքի տիրապետության շրջան։ Այս շրջանից մինչև Արշակունիների հանդես գալը Հայաստանում պայքարի մեջ են եղել տնտեսական երեք կացութաձևեր՝ համայնական, ստրկատիրական և ֆեոդալական, որոնցից ի վերջո ֆեոդալականը հաղթանակում է Արշակունիների ժամանակ։ Ֆեոդալական հասարակության տնտեսական ֆորմացիայի պատմությունը 1—13-րդ դարերում ընկ. Հակոբյանը բաժանում է հետևյալ ժամանակաշրջանների.

1-ին շրջան.— 1—7-րդ դարերում ձևավորվում և զարգանում է ֆեոդալական արտադրական եղանակը, ֆեոդալական հարաբերությունները վերելք են ապրում 3—7-րդ դարերում։

2-րդ շրջան.— 7—11-րդ դարերում չնայած արաբները, բյուզանդացիները ասպատակեցին և լուրջ հարված հասցրին Հայաստանի տնտեսության զարգացման նորմալ ընթացքին, այնուամենայնիվ, ֆեոդալական հարաբերությունների մեջ արմատական և որակական փոփոխություն տեղի չունեցավ։ Արաբները, բյուզանդացիները, սելջուկները արտադրական նոր հարաբերություններ չբերեցին, ֆեոդալիզմի զարգացումը իր հատուկ ատրիբուտներով պահպանվեց նաև օտար լծի տիրապետության շրջանում։[1]

3-րդ շրջան.— 10—13-րդ դարերը տնտեսական կյանքի, արհեստային արտադրության, ապրանքափոխանակության, քաղաքի և բաղաքային կյանքի բուռն զարգացման և աճի ժամանակաշրջանն է։ Ստեղծվում են սոցիալ-տնտեսական նախադրյալներ ֆեոդալական հարաբերությունների կապանքները փշրելու համար, սակայն մասամբ սելջուկների և հատկապես մոնղոլների արշավանքները խափանում են այս նոր հարաբերությունների զարգացումը և մեր ժողովրդի պատմությունը մի քանի դարով ետ մղում։

Պրոֆ. Ա. Աբրահամյանը իր ելույթում նշում է, որ Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների մասին խոսելիս հայ ժողովրդի պատմությունը չպիտի կտրել ընդհանուր պատմության ընթացքից, առանձնացնել արևելյան և ՍՍՌՄ ժողովուրդների պատմությունից և մեկուսացած քննել այն։ Հայ ժողովրդի և նրա հարևանների միջև չինական պարիսպներ չեն եղել։ Հասարակական, տնտեսական ու բաղաքական շատ ու շատ երևույթներ, իրենց առանձնահատկություններով հանդերձ, ընդհանուր են եղել բոլորի համար։ Հայաստանի արևմտյան հնադույն հարևանները հոռոմայեցիներն են եղել, որոնց մոտ իշխել է կլասիկ ստրկատիրությունը։ Հայաստանի հարավային հարևանները, պարսիկները նույնպես ստրկատիրական ֆորմացիա են ապրել։ Վրացագետ ընկերները Վրաստանի հին շրջանը բնութագրում են որպես ստրկատիրական հասարակություն։ Այդ հարցը լուծված է նաև Միջին Ասիայի ժողովուրդների նկատմամբ։ Նշանավոր արևելագետ Ս. Տոլստովը ցույց տվեց, որ ստրկատիրությունը Միջին Ասիայում սկիզբ է առել 13-րդ դարում Ն. մ. թ. և շարունակվել է մինչև մեր թվականության 5—6-րդ դդ.։ Այսպիսով Հայաստանում ստրկության ֆորմացիայի հարցը քննելիս չպետք է մոռանալ վերոհիշյալ հանգամանքը։ Սակայն, սխալ կլինի նաև հարևան

[1] Մանրամասնությունները տես ընկ. Երեմյանի նույն հոդվածում։

[1] Մանրամասնությունները տես ընկ. Ս. Հակոբյանի հիշյալ հոդվածում։

երկրների պատմության սխեման նույնությամբ հարմարեցնել հայ ժողովրդի պատմությանը։

Ապա պրոֆ. Աբրահամյանը անդրադառնալով այն հարցին, որ քննության ենթակա շրջանի մասին հայ և օտար պատմագրություններ շատ ժլատ տեղեկություններ են տալիս, ասում է,— Հայաստանում ստրկատիրության հարցի պարզաբանմանը գործնական օգնություն ցույց տվին Բաոնիի հնագիտական պեղումները, որոնք հելլենիստական շրջանին վերաբերող զգալի նյութեր հայտնաբերեցին։ Այդ նյութերը հնարավորություն են տալիս ավելի համարձակ առաջ քաշել ստրկատիրության խնդիրը հին Հայաստանում։ Պրոֆ. Աբրահամյանը անտիկ հեղինակների (Ստրաբոն, Պլուտարքոս) առանձին վկայությունների վրա հենվելով, դտնում է, որ Տիգրան Բ-ի վերցրած գերիների զգալի մասն օգտագործվել են սև աշխատանքում, դաստակերտում, ագարակում, քաղաքի շինարարության մեջ։ Գերիների կապակցությամբ նա մեջ է բերում Դավիթ Ալավկա որդու դատաստանագրքից առանձին կանոններ, որոնց համաձայն գերին հանդիսանում է տիրոջ սեփականությունը, տերը նրան կարող է սպանել, գնել, վաճառել։

Արտաշեսյան շրջանում ստրկատիրական ֆորմացիան ընդունելով գերիշխող հասարակական-տնտեսական ձև, նա այդ ֆորմացիան չի տարածում Արշակունիների շրջանի վրա՝ մինչև 4-րդ դարը, հետևյալ պատճառներով՝

1. 1—4-րդ դդ. Հայաստանը ենթարկվեց օտարերկրյա նվաճողների հարձակումներին, որոնք հարվածեցին մասնատիրական ստրկական տնտեսություններին, քաղաքը, քաղաքային տնտեսությունը դադարեց խաղալ այն դերը, ինչ նրանք ունեին Արտաշեսյան շրջանում։

2. 4-րդ դարի Հայաստանը բավական մանրամասն նկարագրված է Փավստոսի և Ագաթանգեղոսի մոտ, ուր որոշակի ֆեոդալական հարաբերություններ են արտացոլված։

3. Եթե 1—3-րդ դդ. Հայաստանում ստրկատիրություն լիներ, այն դեպքում մեր մատենագիրները ստրկատիրական հարաբերությունները շեշտված փաստերով կարձանագրեին։

Այսպիսով, Նախաարշակունյան շրջանը կարող ենք դիտել որպես ստրկատիրության շրջան, 2—3-րդ դարերը— անցման շրջան՝ ստրկատիրությունից ֆեոդալիզմ, իսկ հետագա շրջանը՝ վաղ ֆեոդալիզմի շրջան։

Պրոֆ. Աբրահամյանը սխալ է համարում ընկ. Երեմյանի այն կարծիքը, թե ֆեոդալիզմի վերջին էտապը ֆեոդալիզմի լիկվիդացիայի շրջանն է, իրականում լիկվիդացիա չի եղել։ Ճիշտ կլիներ, եթե այդ շրջանը անվանեինք ֆեոդալական հարաբերությունների ձևափոխման և դեգրադացիայի շրջան։

Իր ելույթում դոցենտ Հ. Հարությունյանը գտնում է, որ հայ ժողովրդի պատմության պերիոդիզացիայի հարցը պետք է կապել հայ ժողովրդի կազմավորման հարցի հետ։ Եթե մեր ժողովրդի կազմավորման մեջ որոշիչ դերը պատկանել է արմենիներին, ապա հասարակության մեջ ֆեոդալիզմի տարրը արտահայտված կլիներ ուժեղ, իսկ եթե պատկանել է Հայասային՝ ապա ուժեղ կլիներ ստրկատիրության տարրը։ Նախաարշակունյան շրջանի հասարակության սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրության համար շատ կարևոր և լուրջ տեղեկություններ է հաղորդում Քսենոֆոնը, որի համաձայն արմենները գտնվել են այն աստիճանի վրա, ինչ Տակիտոսի նկարագրած գերմանացիները, այսինքն՝ եղել է ռազմական դեմոկրատիա։ Հայաստանի հասարակությունը 6-ից մինչև 1-ին դդ. (Ն. մ. թ.) ապրեց փոխանցման երկար մի շրջան և Տիգրան Բ-ի և նրա անմիջական հաջորդների ժամանակվանից տեղի ունեցավ ֆեոդալական հարաբերությունների սաղմնավորում։ Այս շրջանի Հայաստանի հասարակական կարգը բնորոշվում է երկու տնտեսաձևի առկայությամբ՝ թույլ, բայբայվող ստրկատիրականի և զարգացող ու հաղթանակող ֆեոդալականի։ Ճիշտ է, Տիգրան Բ-ի ժամանակ երկրում գոյություն են ունեցել ագարակ, դաստակերտ, տաճարական տնտեսություններ, արքունի ձեռնարկություններ, ուր գործագրել են ստրուկի աշխատանքը, սակայն, երկրում այդ ձեռնարկությունները որոշիչ չեն եղել, դրանց արտադրանքը չի արտահանվել արտաքին շուկա, այլ բավարարել է տերերի պահանջը։ Մենք չենք ժխտում ստրկատիրական տնտեսաձևի առկայությունը Հայաստանում, բայց գտնում ենք, որ այդ տնտեսաձևը գերիշխող չէր, ստրուկների աշխատանքը լայն չափով չէր օգտագործվում, այլ որոշողը գյուղացու աշխատանքն էր և ֆեոդալական տնտեսաձևը, ինչպես ճիշտ նկատել են Ն. Ադոնցը և ակադ. Հ. Մանանդյանը։

Տակիտոսը մեր տարեգրության առաջին դարի առաջին քառորդին հայ հասարակությունը հիմնականում բաժանում է երկու դասակարգերի՝ մեծամեծների (նոբելներ) և հասարակ ժողովրդի (պլեբս)։ Վերոհիշյալ բաժանումը ավելի շուտ կապված է ֆեոդալական հասարակության, քան ստրկատիրության դասակարգերի հետ։ Տիգրան Բ-ի և հաջորդների, մասնավորապես 1—50 թթ. (մ. թ.) պատերազմները տակն ու վրա էին արել Հայաստանի ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական կյանքը։ Այդ պատճառով էլ Տրդատ Ա-ը գահ բարձրանալով, ձեռնամուխ է լինում երկրի ներքին կյանքի

կարգավորմանը։ Տրդատ Ա-ի այս միջոցառումները, որոնց նպատակն էր վերականգնել նախարարական կարգն ու կանոնը, ցույց են տալիս, որ իրենից առաջ Հայաստանում գոյություն են ունեցել նախարարներ։ Ուրեմն՝ Հայաստանում վաղ ֆեոդալական հարաբերությունների սաղմնավորումն իր սկիզբն առել է Արտաշեսյան Լպոխայում։ Այսպիսով, սկսած Տիգրան Բ-ից մինչև Տրդատ Գ-ը կազմավորվում է ֆեոդալական արտադրաեղանակը, որի արտադրական հիմնական և գլխավոր միջոցը հանդես է գալիս հողը։ Այնուհետև ընկ. Հարությունյանը զուգահեռ անցկացնելով Տիգրան Բ-ի և Կարլոս Մեծի պետությունների միջև, գրտնում է, որ գերմանացիների մոտ բարբարոսական թագավորությունը հասավ իր զարգացման բարձր աստիճանին՝ 8-րդ դարում, Ռուսաստանում՝ 10—11-րդ դարում, իսկ Հայաստանում՝ Տիգրան Բ-ի օրով։ Այսպիսով միջին դարերը Կովկասում ավելի վաղ են սկսվել, քան Եվրոպայում։ Եթե Եվրոպայի վաղ միջնադարն ընդգրկում է 4—11-րդ դդ. իր երկու էտապներով, ապա Հայաստանում վաղ միջնադարը սկսվում է 1-ին դարից (Ն. մ. թ.) և տևում է մինչև 8-րդ դարը (մ. թ.)։

9-րդ դարից Հայաստանում ֆեոդալիզմը թևակոխում է միջնադարի երկրորդ շրջանը, երբ արտադրական միջոցների զարգացման պատճառով տեղի է ունենում աշխատանքի հասարակական 2-րդ բաժանումը՝ արհեստը բաժանվում է գյուղատնտեսությունից, հանդես են գալիս նոր քաղաքներ՝ Անի, Կարս, Խլաթ, Արծն և այլն։ Երկրում ստեղծվում է ներքին շուկա։ Այս շրջանը Արևելյան Հայաստանում տևում է մինչև 13-րդ դարի վերջը, իսկ Արևմտյան Հայաստանում (Կիլիկիա) մինչև 14-րդ դարի 2-րդ կեսը։ Այս շրջանի բնորոշ գիծն է ֆեոդալական քաղաքի բաժանումը գյուղից, արտադրողական ուժերի վերելքը, ներքին և արտաքին առևտրի զգալի աճը, ճորտատիրական իրավունքի խորացում, սրվում է դասակարգային պայքարը։ Ֆեոդալական հասարակակարգի ներսում ստեղծվում են նյութական պայմաններ նրա բայրայման համար։ Բայց Հայաստանի ֆեոդալիզմի այս զարգացումը չգնաց դեպի իր ուշ միջնադարը, ուր պիտի առաջանար կապիտալիստական ֆորմացիայի սաղմնավորումը, ինչպես այդ տեղի ունեցավ եվրոպական մի շարք երկրներում, որովհետև դրան խանգարեցին մոնղոլական արշավանքները։

Պատմ. գիտ. թեկնածու Բ. Հարությունյանն իր ելույթում առարկում է այն ընկերներին, որոնք ստրկատիրության գոյությունը կապում են Հայաստանում հելլենիստական հասարակության առկայության հետ և այն հասցնում են մինչև Արշակունիների շրջանը՝ 4—5-րդ դարերը։ Նա գտնում է, որ Հայաստանում հելլենիզմը այն չափով ու թափով արտահայտություն չի գտել, ինչպես Սիրիայի և Առաջավոր Ասիայի շատ երկրներում։ Ինչպես անտիկ, այնպես էլ հելլենիստական աշխարհում քաղաքն է իշխել գյուղի վրա, իսկ Հայաստանում այդ ժամանակ հակառակն է եղել։ Բացի այդ, Հայաստանի տարբեր մասերը զարգացման տարբեր աստիճանի վրա են կանգնած եղել, օրինակ, միջնաշխարհում հելլենիզմի ազդեցությունն ավելի թույլ է արտահայտվել, քան արևմտյան և հարավ-արևմտյան Հայաստանում։ Ընդհանուր առմամբ Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացումը չգնաց անտիկ աշխարհի ժողովուրդների՝ հույների և հռոմայեցիների զարգացման ճանապարհով։ Մարքսիզմի կլասիկները որոշակի տարբերություն են դնում Արևելքի և անտիկ աշխարհի ժողովուրդների զարգացման միջև։ Մարքսը տարբերում է ասիական, անտիկ և գերմանական համայնքների զարգացումը։ Հողն Ասիական համայնքում անհատական սեփականություն չէր, այլ ընդհանուր։ Այստեղ գյուղացին հողատեր էր, որպես համայնքի անդամ։ Ասիական համայնքում հողը և արհեստը համակցված են հանդես գալիս։ Նույնն ենք տեսնում Հայաստանում։ Հայաստանում գյուղական համայնքը իր գոյությունը պահպանեց մինչև Հոկտեմբերյան Մեծ հեղափոխությունը, մինչդեռ ստրկատիրական հասարակակարգ ապրած ժողովուրդների մոտ նա շատ վաղ է ենթարկվել քայքայման։ Ընկ. Բ. Հարությունյանը առարկում է ընկ. Երեմյանի այն կարծիքին, թե հելլենիզմի քայքայումը միայն պայմաններ ստեղծեց Հայաստանում նատուրալ տնտեսության անցնելու համար։ Նատուրալ տնտեսություն, ասում է նա, տիրապետող կամ գերակշռող է եղել մինչկապիտալիստական բոլոր ֆորմացիաներում։

Այսպիսով, Հայաստանում հելլենիզմի շրջանում ստրկատիրություն հանդես չի եկել որպես ֆորմացիա. ստրկական աշխատանքը ժողովրդական տնտեսության հիմնական ֆակտորը չի հանդիսացել. ժողովրդական տնտեսությունն իր բնույթով եղել է գյուղատնտեսական և ոչ քաղաքային-առևտրական ու արհեստավորական, այն խարսխված է եղել գյուղացու աշխատանքի վրա։ Ընկ. Հարությունյանը ճիշտ չի համարում նաև այն տեսակետը, թե Հայաստանում գոյություն ունեցող «ադարակը» և «դաստակերտը» լատիֆունդիաներ են, իսկ սրանց բնակիչներն էլ ստրուկներ։

Ընկ. Բ. Հարությունյանը առարկում է նաև այն ընկերներին, որոնք գտնում են, թե 10—13-րդ դդ. Հայաստանում արտադրողական ու-

ժերի բուռն զարգացում է եղել և իր ժամանակին գերազանցել է Արևմտյան Եվրոպայի տնտեսական զարգացմանը։ Օրինակներում հիշվող Հոնենցը, Սամադինը, Դավթակ քորեպիսկոպոսը, Ումեկը դրանք վաշխառուներ և վաճառականներ են, առևտրական կապիտալի ներկայացուցիչներ և դրանց հարստությունները արդյունք չեն արտադրողական ուժերի զարգացման։ Մարքսը ասել է, որ վաշխառուական կապիտալը արտադրողական ուժերի զարգացման նշան չէ, որ այն վերջիններիս թուլացնում է, հետ մղում։ Այս ժամանակ հարկերը դրամով չեն եղել. դրամը եղել է հարկերի չափանիշ միայն և սխալ է այն կարծիքը, թե եթե չլիներ սելջուկյան և մոնղոլական արշավանքների կատաստրոֆիկ հետևանքները, Հայաստանում իբր թե կսաղմնավորվեին կապիտալիստական հարաբերությունները։ Ընկ. Բ. Հարությունյանը գտնում է, որ հայ ժողովրդի պատմությունը պետք է կապել ասիական (գյուղական) համայնքի զարգացման պատմության հետ։

Անցնելով հայ ժողովրդի պատմության պերիոդիզացիային, ընկ. Բ. Հարությունյանը ընդունում է հետևյալ բաժանումը.

1. Նախաֆեոդալական կամ մին. ֆեոդալական շրջան— 1-ին դարի կեսից մինչև 2-րդ դարի վերջը։

2. Վաղ ֆեոդալական շրջան (նախարարական սիստեմ)— 3—9-րդ դարերի վերջը։

3. Զարգացած ֆեոդալիզմի շրջան 10—13-րդ դդ. (մինչև մոնղոլները)։

4. Օտար տիրապետողների ռազմաֆեոդալական շրջան— 13-րդ դարի 2-րդ կեսից մինչև 1828 թ.։

5. Ֆեոդալիզմի քայքայման և կապիտալիստական հարաբերությունների նախնական զարգացման շրջան 1828 թվից մինչև 1870-ական թվերը։

Դոցենտ Ս. Պողոսյանը գտնում է, որ հայ ժողովրդի պատմության պերիոդիզացիայի մասին բանավիճող ընկերներն անտես են առնում այն հարցը, թե հայ ժողովրդի ձևավորման շրջանում ինչ ֆորմացիա է եղել։ Անկասկած ուրարտական հասարակությունը ստրկատիրական էր, այդ կարելի է հասցնել մինչև 6-րդ դարի վերջը (Ն. մ. թ.)։ Բայց անկասկած է նաև այն, որ միայն ուրարտական տարրը չէր, որ կազմեց հայ ժողովուրդը։ Նշանակում է մյուս տարրը, որի մեջ մտնում էին այլ ցեղեր և ցեղային միություններ, ստրկատիրական աստիճանի վրա չէին գտնվում։ Սրանց մասին Քսենոֆոնի տված նկարագրությունները չեն ասում, թե 5-րդ դարի վերջերին (Ն. մ. թ.) եղել է ստրկատիրական ֆորմացիա։ Այսպիսով, ստացվում է այն, որ միևնույն տերիտորիայում, միևնույն ժողովրդի ձևավորման ժամանակ, գոյություն ուներ երկու ֆորմացիա, որոնք մտել են բախման մեջ և քայքայել տոհմական կարգերը։ Այդ քայքայման ընթացքում հասարակությունը չգնաց ստրկատիրության ֆորմացիայի ուղիով, այլ ստեղծվեց գյուղական տերիտորիալ համայնք։

Ես հայ ժողովրդի պատմության պերիոդիզացիան այսպես եմ պատկերացնում՝

1. 6—1-ին դդ. (Ն. մ. թ.) ստրկատիրական ֆորմացիա։

2. 1—2-րդ դդ. անցողիկ շրջան, որի ժամանակ ֆեոդալիզմը տիրապետող չի եղել, բայց զարգացման տենդենցը տարել է դեպի ֆեոդալիզմը։

3. 2—8-րդ դդ. վաղ ֆեոդալիզմ, որն ունեցել է երկու էտապ.

ա) 2—4-րդ դդ. նախարարական՝ ֆեոդալական հասարակակարգի ամբողջական ձևավորման շրջան։ Այս շրջանում նախարարները տիրում են հողերին։ Այս ժամանակ գյուղացին ճորտ չէր, չկային մասնատված հողատիրական ձևեր։ Ֆեոդալական միավորը նախարարական կալվածքն էր, իսկ վերջինս դեռ չէր տրոհվել տոհմի անդամների միջև, տնօրինողը տանուտերն էր.

բ) 5—8-րդ դդ.։ Այս շրջանում խարխլվում է նախարարական հողատիրության հիմքը։ Սեպուհները՝ տոհմի մյուս անդամները հող են պահանջում և ստանում իրենց բաժին կալվածքը։

4. 9-րդ դարի կեսից մինչև 13-րդ դարի առաջին կեսը՝ բուն Հայաստանում, իսկ մինչև 14-րդ դարի վերջը Կիլիկիայում զարգացած ֆեոդալիզմի շրջան է, որի բնորոշ հատկանիշներն են.

ա) Ֆեոդալական մասնատվածություն, բաստեղծվում են մանր թագավորություններ, իշխանություններ.

բ) Քայքայվում է նախարարական կարգը. ֆեոդալական կալվածքը բաժանվում է ֆեոդալական մյուս անդամների միջև.

գ) Գյուղացին ճորտացվում և ամրացվում է հողին, այդ պրոցեսը սկսվում է 9-րդ դարի կեսերին և ավարտվում 12-րդ դարում։

դ) Զարգանում են ֆեոդալական քաղաքները, որոնց թիվը անցնում է մեկ տասնյակից։ Քաղաքներում զարգանում է արհեստը, առևտուրը, ընդլայնվում է վաճառման չուկան. արհեստը բաժանվում է գյուղատնտեսությունից, արհեստների մեջ հանդես են գալիս մասնագիտացված ճյուղեր, նրբանում են գործիքները և այլն։ Բայց այս չի նշանակում կապիտալիստական հարաբերությունների սաղմնավորում։ Այս զարգացումը առաջ չբերեց ֆեոդալիզմի բայրայում, բայց ստեղծեց նախադրյալներ ֆեոդալիզմի քայքայման համար։

4. 13-րդ դարի երկրորդ կեսից մինչև 19-րդ դարի առաջին քառորդը. ֆեոդալական հարաբերությունները դառնում են պրիմիտիվ։ Եթե մինչև 13-րդ դարը գյուղացիության մի մասը ճորտացված էր, ապա այդ բանը հիմա տեղի չի ունենում։ Հայ ժողովուրդն ընկնում է տնտեսական և կուլտուրական ավելի ցածր մակարդակի վրա կանգնած ցեղերի տիրապետության ներքո։ Այս իրադրությունը տևում է մինչև 17-րդ դարի կեսը, երբ քաղաքային կյանքը և գյուղատնտեսությունն ապրում են անկման շրջան։ Այնուհետև 17-րդ դարի 2-րդ կեսից տեղի է ունենում տնտեսական կյանքի որոշ աշխուժացում. նորից սկսում են զարգանալ քաղաքները՝ Կարս, Կարին, Երզնկա, Երևան, Բաղեշ, Վան և այլն։ Նորից առաջանում է քաղաքային դասը։

Այս վերջին շրջանը ընկ. Պողոսյանը բաժանում է երկու մասի.

ա) 14—17-րդ դդ. 2-րդ կեսը, որից հետո սկսվում են ազգային ազատագրական շարժումները, որոնք նոր խավերի, առևտրական կապիտալի ձգտումների արտահայտիչներն էին։

Պատմ. գիտ. թեկնածու Լ. Խաչիկյանն իր ելույթում հիմնականում կանգ առավ հայ ժողովրդի պատմության 12—14-րդ դդ. սոցիալ-տնտեսական հարաբերությունների բնորոշման հարցի վրա։ Հակառակ ընկ. Բ. Հարությունյանի, նա կատարելով մի շարք համեմատություններ, գտնում է, որ հիմք չկա նվազեցնելու Հայաստանում 12—14-րդ դդ. հայ վաճառական կապիտալի դերը, կապիտալ, որը սերտ կերպով առնչվում է առևտրի և արդյունագործության հետ։ Այս դրությունը հիմնավորելու համար ընկ. Խաչիկյանը Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Ձեռագրատան (Մատենադարան) անտիպ քարոզներից հետաքրքիր տվյալներ է բերում, ըստ որի վաճառականները փոխ տված դրամի դիմաց գրավ են վերցնում տուն, այգի, վարելահող, կենդանիներ՝ ձի, եզ և այլն, և սրանց օգտագործում են մինչև փոխ տված դրամի վերադարձնելը, կամ վաճառականները գնում են իր արժեքից ցածր գներով տուն, այգի, կալվածք։ Հետաքրքիրն այն է, որ ժամանակակիցները մեծ տարբերություն են դրել իրենց կալվածքներից զրկված ֆեոդալների ու նորելուկ դրամատեր-հոգատերերի մեջ։ 14-րդ դարի մի բարոզի տվյալներով հայերը ևս Ֆլորենցիայի բանկի վաճառականների նման օգտագործել են մուրհակը, այլ երկրներ դրամական մեծ գումարի փոխանցումներ կատարելու համար։ Ուստի, պետք է ենթադրել, որ 12—14-րդ դդ. հայ առևտրական տները Ֆլորենցիայի առևտրականների նման շատ խոշոր դեր են կատարել համաշխարհային առևտրի մեջ։ Այս ավելի քան հասկանալի է դառնում, եթե նկատի ունենանք այն ժամանակվա համաշխարհային առևտրի ճանապարհները, որոնց մի մասն անցնում էր Հայաստանով. հայերը մի ճանապարհով կապվում էին Կիլիկյան նավահանգիստների հետ և ապա կապվում իտալական վաճառաշահ քաղաքների հետ։ Իսկ մյուսով դուրս էին գալիս Սև ծով, Տրապիզոն։ Եվ պատահական չէ, որ արաբ որոշ հեղինակներ վերջինս անվանել են Հայոց ծով։ Այնուհետև ընկ. Խաչիկյանը ցույց է տալիս, որ առևտրավաճառականական կապիտալը ներթափանցում է նաև արտադրության մեջ։ Նա վկայակոչում է օտարերկրյա ճանապարհորդներից Մարկո Պոլոյին, Իբն Վատուտայի վկայությունները հայկական քաղաքների արտադրանքի մասին։ Ապա ընկ. Լ. Խաչիկյանը, Ն. Շնորհալու, Մխիթար Դոշի տվյալներով փորձում է ցույց տալ, որ հայ արհեստավորները զրկված են եղել սեփական միջոցներով նյութ ձեռք բերելու հնարավորությունից և նյութ էին ստանում պատվիրատուից ու պատրաստի արդյունքը հանձնում նրան, իսկ սրանց նյութ մատակարարողը եղել է մեծատուն վաճառականը։ Կան մատենագրական տվյալներ, որոնք ցույց են տալիս, որ այդ ժամանակ խիստ խորացված է եղել աշխատանքի բաժանումը և որևէ առարկայի արտադրության պրոցեսում մասնակցել են մասնագիտական տարբեր պատրաստություն ունեցող արհեստավորներ։ Կենտրոնական արհեստանոցների գոյության մասին որոշակի փաստ չունենք, սակայն 14-րդ դարի մի քարոզում խոսվում է աշխատանքի վրա հսկող վերակացուի մասին, իսկ այս պաշտոնը ինչին ենթադրել է տալիս, որ եղել են հաստատություններ, ուր մի հարկի տակ աշխատել են բազմաթիվ վարձկաններ։ Հետևաբար 12—14-րդ դդ. հայ վաճառականները Ֆլորենցիայի իրենց դասակիցների նման զբաղվում էին նաև արտադրական գործունեությամբ, իրենց ձեռքն անցած ընդարձակ կալվածքներում սկսում էին մշակել այնպիսի կուլտուրաներ, որոնց պահանջն առաջադրում էր բաղաքի արհեստագործը. սրանք որպես հում նյութի և դրամի տեր շահագործում էին բաղաքային համքարությունների մեջ ընդգրկված, սակայն նյութ ձեռք բերելու հնարավորությունից զրկված արհեստավորներին ու տնայնագործներին և հավանորեն բաց էին անում կենտրոնական արհեստանոցներ, ուր վերակացուի հսկողության տակ, չնչին վարձով աշխատեցնում էին արտադրական միջոցներից զրկված «վարձկաններին»։

Եթե 12—14-րդ դդ. միջազգային կարավանային ճանապարհների հանգուցակետում

Անիում, Կարսում, Երզնկայում, Էրզրումում, Արծնում, Նախիջևանում և այլ քաղաքներում ստվերագծվում են վաղ կապիտալիստական հարաբերությունների կոնտուրները, այդ բոլորովին չի նշանակում, թե այդ հարաբերությունները սկսում են արդեն քայքայել կամ խարխլել ֆեոդալիզմի հիմքերը Հայաստանում։ Ընդհակառակը, Հայաստանը իր ամբողջությամբ դեռևս տիպիկ ֆեոդալական երկիր էր, սակայն շրջաններ կային (Սյունիք և այլն), ուր դեռևս քաղաքներ չէին առաջացել, ուր վաշխառուական կապիտալը իր անդրջրհեղեղյա ձևերի մեջ էր գտնվում։ Իսկ մոնղոլական հորդաների բարբարոսական տիրապետության ընթացքում Հայաստանի տնտեսությանը հասցվեց այնպիսի ծանր հարված, որ ոչ միայն մեկը մյուսի հետևից քայքայվեցին հայկական քաղաքները, կասեցվեց արտադրողական ուժերի հետագա զարգացման հնարավորությունը, այլև Հայաստանը ապրեց տևական դեգրադացիայի մի եկարատև շրջան։

Ընկ. Խաչիկյանը անցնելով Հայաստանում ստրկատիրական ֆորմացիայի գոյության հարցին, գտնում է, որ ընկ. Ս. Երեմյանի տեսակետը ճիշտ է և այն ավելի հիմնավորելու համար ավելացնում է այլ փաստեր։

1. Հայ և օտար հեղինակները վկայում են, որ 5-րդ դարից առաջ ստրուկը մեծ դեր է կատարել տնտեսության մեջ։ Գերիներին որպես ստրուկի օգտագործել են կալվածքներում, ագարակներում. Ա. Շիրակացու 21-րդ խնդիրը նման երևույթի արտացոլումն է։

2. Գանգրայի ժողովների կանոններում և Մ. Խորենացու մոտ հիշվում է, որ 5-րդ դարից առաջ ծառաները փախչում էին իրենց տերերից։ Այս երևույթը մեծ չափերի պիտի հասած լիներ, որպիսզի տեղ գտներ եկեղեցական կանոններում։

3. Հայաստանի հարևան ժողովուրդներն անցել են ստրկատիրական ֆորմացիան։ Ռ. Նյուսացու, Ռ. Կեսարացու երկերում կան բազմաթիվ տվյալներ, որոնք կասկած չեն թողնում այն մասին, որ Փոքր Հայքում, հիմնական արտադրող ստրուկն է եղել։ Եթե այսպես էր Փոքր Հայքում, ինչու պետք է Մեծ Հայքում ֆեոդալիզմ լիներ 4-րդ դարում։

4. Այն հանգամանքը, որ «Կանոնգրքի» և այլ աղբյուրների մեջ ծառաներ, ստրուկներ չեն հիշատակված որպես Հայաստանի հիմնական արտադրողներ, արդյունք է այն բանի, որ միջնադարյան հեղինակները ստրուկներին հասարակության անդամ չեն համարել։

Ապա ընկ. Խաչիկյանը եզրափակում է, որ ընկ. Երեմյանը, ինչպես և դասագրքի հեղինակները, ճիշտ են վարվել, երբ Արշակունյաց Հայաստանի հասարակական ֆորմացիան համարել են ստրկատիրական։ Նրա վերնաշենքում առաջ եկած նոր փոփոխությունները՝ քրիստոնեության տարածումը, հայ գրերի գյուտը, գրական վերելքը կապում է ֆեոդալիզմի հաղթանակի ու ստրկատիրական արտադրաձևի պարտության հետ։

Ընկ. Խաչիկյանը գտնում է, որ ընկ. Ս. Երեմյանի հայ ժողովրդի պատմության պերիոդիզացիայի հիմնական թերությունն այն է, որ նա անտեսել է դասակարգային հասարակության մեջ մի տնտեսաձևից մյուսին անցնելու ռևոլուցիոն միջոցը։ Հրացնելով ու զարդացնելով մարքսիզմը, ընկեր Ստալինը բնորոշեց ստրուկների ռևոլուցիայի հասկացողությունը, որպես ստրկատիրական կարգերի կործանման և ֆեոդալական կարգերի հաստատման հիմնական գործոն։ Այս առումով պետք է լուրջ ուշադրություն դարձնել 4-րդ դարի ստրուկների այն ապստամբությունների վրա, որոնք նշանակություն ունեցան ստրկատիրական կարգերի կործանման գործում։ Հենց այդպիսի դեպքեր է համարում ընկ. Խաչիկյանը 4-րդ դարի սոցիալական շարժումները Փ. Հայքում, Արշակավանի դեպքերը, աղանդավորական քողով ծածկած մյուս շարժումները և այլն, որոնք երկարատև ռևոլուցիոն պայքարի միջոցով վերջնական փլուզման հասցրին ստրկատիրական կարգերը Հայաստանում 4-րդ դարի ընթացքում և ֆեոդալական հասարակության սոցիալ-տնտեսական հարաբերությունների հաղթանակն ապահովեցին։

Պատմ. գիտ. թեկնածու Բ. Առաքելյանն իր ելույթում նշում է, որ կարևոր հարց է ոչ միայն ստրկատիրական ֆորմացիայի և ֆեոդալական հասարակության ջրբաժան սահմաններ նշելը, այլև նույնքան կարևոր է ֆեոդալական հասարակության առանձին շրջանների ստորաբաժանման սահմանների և նրանց բնութագրի ճշտումը։ Սխալ են այն ընկերները, ասաց նա, որոնք կարծում են, թե քաղաքական կյանքը, տնտեսությունը զարդացած չի եղել Հայաստանում, թե Արևելքը իր հասարակական անտեսական զարգացմամբ 10—13-րդ դդ. չի կանխել Եվրոպային։ Արևմուտքում հասարակական տնտեսական հարաբերությունները համեմատաբար ուշ սկսվելով զարգացան ավելի ինտենսիվ և ունեցան նորմալ ընթացք, իսկ Արևելքում այդ չեղավ՝ սելջուկների մասնակի և սրանց հաջորդող մոնղոլների ավերիչ արշավանքների հետևանքով։ Եվ եթե Արևելքի հասարակության նորմալ զարգացումը չխափանվեր, ապա զարգացումը կգնար այն ուղղությամբ, ինչ գնաց Արևմուտքում։

Ընկ. Բ. Առաքելյանը իր ելույթը հիմնակա-

նում նվիրում է Հայաստանի ստրկատիրական ֆորմացիայի գոյության հարցին։ Նա ասում է.— այն ընկերները, որոնք առաջին դարը (ն. մ. թ.) ընդունում են ֆեոդալական հարաբերությունների սաղմնավորման կամ անցման շրջան, փաստեր չբերեցին և չէին էլ կարող բերել։ Ես ես այդ հարցում պաշտպանում եմ ընկ. ընկ. Ս. Երեմյանի, Ա. Աբրահամյանի, Լ. Խաչիկյանի տեսակետները։ Այս տեսակետի համար չնայած մասնագիտական փաստերը սակավ են, բայց մեզ օգնում է հնագիտությունը։ Կարմիր բլուրի պեղումները ցույց տվեցին, որ ուրարտական պետության հին արևելյան ռազմա-ստրկատիրական տիպի լինելը չի սահմանափակվել կենտրոնով (Բիայնայով), նրա ծայրամասերից մեկը Արարատյան դաշտը (Թեյշեբաին քաղաքը) ևս եղել է ստրկատիրության տիպիկ կենտրոն։ Կարմիր բլուրում պեղվել է ոչ միայն միջնաբերդը, այլև քաղաքի երկու թաղամասը։ Այս թաղամասի տները միանման են և միաչափ։ Այդ տների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բնակիչները չեն ունեցել սեփական տնտեսություն, այլ ապրել են պետության հաշվին, կնշանակի նրանք եղել են ստրուկներ։ Իհարկե, ուրարտական պետության բոլոր ծայրամասերն այսպես չեն եղել, դրանց մեջ եղել են այնպիսիները (Սեվան), որտեղ կային ցեղային միություններ և նախնադարյան համայնական հասարակությունը սկսել էր քայքայվել։ Ստրուկները ուրարտական հասարակության մեջ գերազանցապես զբաղվել են գյուղատնտեսության մեջ և մասամբ արհեստներով։ Եվ երբ ուրարտական պետությունը քայքայվեց, ստրուկներն էլ, որոնց կերակրում էր պետությունը, ցրվեցին հավանաբար համայնքների մեջ, իսկ այդ ժամանակ տերիտորիալ համայնքը Հայաստանում ձևակերպված էր արդեն և նպաստում էր այդ բանին։ Այսպիսով, ուրարտական պետության քայքայման հետևանքով, կարճ ժամանակում ստրկությունը մղվեց իր նախնական աստիճանի վրա, տեղի ունեցավ ստրուկների թվի նվազում և գյուղական համայնքի ուժեղացում։

Ընկ. Ի. Առաքելյանը գտնում է, որ Քսենոֆոնի նկարագրած գյուղերը պատկանել են Հայաստանի հետամնաց շրջաններին և եթե նա անցներ Արարատյան դաշտով, այլ բան կգրեր։ Դրա համար էլ Քսենոֆոնի նկարագրության մեջ ստրուկների չենք հանդիպում։

4—1-ին դդ. (ն. մ. թ.) և մի փոքր հետո էլ Հայաստանն ընդգրկված է եղել հելլենիստական սֆերայում։ Այդ բանը ցույց տալու համար ընկ. Բ. Առաքելյանը բազմաթիվ փաստեր է բերում, հենվելով մասնավորապես Գառնիի պեղումների արդյունքների վրա։ Հայտնաբերված իրերը (զանազան մեծության ապակյա սրվակներ, անոթներ) պատրաստված են այնպիսի նրբությամբ, ճաշակով, որ ոչ մասնագետները առաջին հայացքից կարող են դասել անտիկ աշխարհի՝ Հունաստանի, Հռոմի կուլտուրայի շարքին, մինչդեռ մեր միության լավագույն մասնագետները որոշակի ասել են, որ դրանք նյութի կազմությամբ, ձևով և մշակման տեխնիկայով տեղական արտադրանք են։ Գառնիում պեղված 50 գերեզմաններում գտնվել են բացի սրվակներից և անոթներից, նաև դրամներ (առաջին դար ն. մ. թ.), գինդեր, օղեր, մատանիներ՝ ոսկուց, արծաթից, բրոնզից դեմաններ։ Դեմանների վրա քանդակված են վազող մարդ և հելլենիստական շրջանը բնորոշող այլ նկարներ։ Այս գերեզմանները ոչ հարուստ մարդկանց գերեզմաններ են։ Գառնիի պեղումները ցույց են տալիս, որ Հայաստանում զարգացած են եղել բազմաթիվ արհեստներ, եղել է բարձր կուլտուրա և հելլենիստական կուլտուրան թափանցել է քաղաքային բնակչության կենցաղի մեջ։ Այս բոլորից հետո սխալ կլինի պնդել, թե Հայաստանում 4—1-ին դարը (ն. մ. թ.) անցման շրջան է եղել, ընդհակառակը, տնտեսությունը, կուլտուրան բարձր աստիճանի վրա են գտնվել։ Իսկ այդ բանը մեզ իրավունք է տալիս ասելու, որ ստրկատիրական ֆորմացիայի համար Հայաստանում տնտեսական հիմք կար։ Ապա նա նշում է, որ հելլենիստական հասարակությունը ստրկատիրական հասարակության մի էտապն է, ավելի զարգացած, քան հին Արևելյան ստրկությունը, քան հունական և հռոմեական վաղ շրջանի ստրկությունը։ Հայաստանի հելլենիստական հասարակության բնորոշ գիծն այն է, որ այստեղ, տերիտորիալ (գյուղական) համայնքն ուժեղ էր, կենսունակ. այդ պատճառով էլ քաղաք պետություններ չառաջացան, ընդհակառակը, առաջ եկան հելլենիստական պետություններ, որտեղ առևտուրը, արհեստը ավելի զարգացած էր հին արևելյան տիպի ստրկատիրության հետ համեմատած։ Հելլենիստական գյուղական համայնքի պայմաններում հող է նախապատրաստվում ֆեոդալիզմին անցնելու համար։ Հին արևելյան տիպի ստրկությունը եղել է պետական սեփականություն (մասամբ տնային), իսկ հելլենիստական ստրկությունը հանգեց այն բանին, որ պետական ստրկության կողքին մեծ ծավալ ստացավ մասնավոր ստրկությունը։ Ստրկատիրական ֆորմացիայի գոյությունը հաստատվում է նաև այն փաստով, որ Հայաստանում 2-րդ դ. (ն. մ. թ.) մինչև մեր թվականության 2-րդ դարը, գոյություն են ունեցել 10-ից ավելի խոշոր քաղաքներ, որոնք ավելի տնտեսական, քան տրանզիտ առևտրի կենտրոններ էին։ Բնորոշ է որ ստրկա-

տիրական հասարակության կործանման հետ (4-րդ դ. մ. թ.) այդ քաղաքներն էլ մեծ մասամբ անհետացան, իսկ վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում, որպես աչքի ընկնող տնտեսական կենտրոն, առաջ եկավ միայն Դվինը։

Ընկ. Բ. Առաքելյանի կարծիքով ադարակներում նստեցրել են ստրուկներին և դարձրել կոլոն։ Եթե այդպիսին է եղել 3—4-րդ դ. (մ. թ.), ապա դրանից առաջ ագարակները եղած պետք է լինեն ստրկատիրական լատիֆունդիալ տնտեսություններ։ Ստրկատիրությունը Հայաստանում տևել է մինչև 3-րդ դարը (մ. թ.), որպես փաստ նա հիշեցնում է ստրկատիրական ընդհանուր ճգնաժամը անտիկ և հելլենիստական աշխարհում, որը եղել է 3-րդ դարում (մ. թ.)։ Հայաստանում այդ շրջանում տեղի են ունեցել սոցիալական ցնցումներ, օրինակ, ծառաների փախուստ, ինչպես այդ երևում է Գանդրայի և Աշտիշատի ժողովի կանոններից, Արշակավանի անցքերը և այլն, որոնք ավելի շուտ կապված են ստրուկների և հողին ամրացված կոլոնների հետ։ Իսկ 3—4-րդ դարը (մ. թ.) նա համարում է բեկման շրջան, որի ընթացքում Հայաստանում հաղթող են հանդիսանում ֆեոդալական արտադրական հարաբերությունները։

Ընկ. Ս. Շլեպճյանն իր ելույթի սկզբում քննադատում է ընկ. Բ. Առաքելյանի այն կարծիքը, թե ստրկատիրությունը Ուրարտուից հետո ետ մղվեց դեպի պատրիարխալ ստրկություն։ Ընդհակառակը, ասում է նա, Ուրարտուի անկումով ռազմաստրկատիրական ստրկությունը ոչ թե անկում ապրեց, այլ զարգացավ։ Էնգելսը խոսելով գերմանական մարկի մասին, ասում է, որ այն չհասավ Անտիկ և ոչ էլ Արևելյան տնային ստրկությանը։ Նշանակում է Էնգելսը տարբերում է Արևելյան տիպի ստրկատիրությունը Անտիկ աշխարհի ստրկատիրությունից, իսկ Հայաստանը դուրս չէր Արևելքի ոլորտից։ Աքեմենյան շրջանում ավարտվում է տոհմական (արյունակցական) համայնքի քայքայումը և հասարակության զարգացումը մեզ մոտ գնում է դեպի Արևելյան տիպի ստրկություն, և ոչ թե հռոմեական և հելլենիստական զարգացած ստրկություն։ Հելլենիզմի խոշոր մասնագետ Ռանովիչը գտնում է, որ հելլենիզմը կործանեց հունական պոլիսները և սկիզբ դրեց Արևելքի գյուղացիական համայնքների քայքայմանը, բայց այն չկարողացավ ավարտել։ Իսկ այս նշանակում է, որ հելլենիզմի ժամանակ ստրկատիրական հարաբերությունները Արևելքում չէին կարողանում զարգանալ, ինչպես Հռոմում և Հունաստանում։ Գյուղական համայնքը Հայաստանում ուժեղ էր և հելլենիզմի ժամանակ չքայքայվեց։ Այնուհետև ընկ. Շլեպճյանը կանգ է առնում հելլենիզմի ընդգրկած ժամանակաշրջանի վրա և նշում, որ մեր ընկերները սխալ կերպով հելլենիզմը հասցնում են մինչև 3-րդ դարը (մ. թ.), ոմանք էլ նույնիսկ 5-րդ դարը։ Մինչդեռ համաշխարհային պատմության մեջ ընդունված է այն հասցնել մինչև 1-ին դարը (մ. թ.)։ Եթե ընդունենք, որ 4-րդ դարում (մ. թ.) Հայաստանում ֆեոդալական հարաբերությունների ձևավորում է եղել, ապա պետք է ընդունել, որ այդ բանը մեկ անգամից չկատարվեց, ուրեմն այդ նոր երևույթի սաղմերը ե՞րբ առաջ եկան։ Պատասխանը կլինի 2—3 դարերից շուտ։ Հենց այս հարցին է վերաբերում քրիստոնեության պետական կրոն դառնալը Հայաստանում։ Ինչպես հայտնի է, քրիստոնեությունը ֆեոդալական հասարակության իդեոլոգիան է։ Հայաստանում այն պաշտոնական կրոն ընդունվեց 4-րդ դարի սկզբին (ոմանք էլ այդ դնում են 3-րդ դարի վերջերին)։ Քրիստոնեությունը, որ ծագել էր առաջին դարում (մ. թ.), ուղեկցում է ֆեոդալական հարաբերություններին, որի կրողը եղել է գյուղացիական համայնքը։ Արտաշեսյանների կործանումը, Արշակունիների հաստատումը և քրիստոնեության մուտքն ասում են, որ հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքում եղել են մեծ տեղաշարժեր։ Նկատի ունենալով այդ հանգամանքը ընկ. Ս. Շլեպճյանը դնում է, որ Հայաստանում մինչև 1-ին դարի կեսը՝ Արշակունիների հանդես գալը, պետք է ընդունել Արևելյան տիպի ստրկություն, որի ճգնաժամն սկսվել էր Տիգրան Բ-ի մահից հետո։ Առաջին դարում (մ. թ.) առաջանում են ֆեոդալական հարաբերությունները. այդտեղից էլ մինչև 9-րդ դարի սկիզբը կարելի է համարել վաղ ֆեոդալիզմ։ Իսկ 9—11-րդ դարերը զարգացած ֆեոդալիզմ, որը տանելու էր ֆեոդալական հասարակակարգի քայքայումը, բայց խանդարվեց մոնղոլների և հաջորդ ավերիչ արշավանքների պատճառով։

Ընկ. Աշ. Հովհաննիսյանն իր ելույթը հիմնականում նվիրում է զարգացած ֆեոդալիզմի բնութագրմանը։ Նա գտնում է, որ 12—13-րդ դդ. Հայաստանում ստեղծվեցին սոսկ նախապայմաններ կապիտալիստական արտադրաձևի առաջացման համար, սակայն ոչ ինքնին նոր կացութաձև։ Ընկ. Աշ. Հովհաննիսյանը անդրադառնալով ընկ. Լ. Խաչիկյանի ելույթի մեջ բերված փաստերի առաջին խմբին, նշում է, որ այդ խումբը ընդգրկում է միջնադարյան Հայաստանի ոչ թե արտադրական, այլ փոխանակային հերաբերությունների ոլորտը։ Իսկ այդ փաստերը ցույց են տալիս, ոչ թե այն, թե արտադրական ինչպիսի հարաբերություններ էին իշխում Հայաստանում, այլ միայն այն, թե ինչ էին արտադրում կամ ինչ եղանակով մտնում առևտրական շրջանառության մեջ։ Վաճառում

էին Հայաստանի առևտրականները արհեստավորների պատրաստած ապրանքը, թե՞ իրենց տված արտադրամիջոցների օգնությամբ նրանց արտադրած ապրանքը։ Ո՞ւմ միջոցով էր տեղի ունենում արտադրությունը, բանվորների՞, թե՞ արտադրության միջոցների սեփականատեր արհեստավորների։ Այս հարցն է, որ չի պարզվում ընկ. Խաչիկյանի բերած տվյալներով։ Սելջուկների ասպատակությունները մեծ վնաս հասցրին հայկական քաղաքներին, սակայն նրանց զարգացման ուղղությունը չփոխվեց։ Փոխվում էր իշխողների էթնիկական կազմը, սակայն ոչ քաղաքների դերը։ Այս շրջանի քաղաքաբնակչությունը (բուրժերությունը) չէր ստեղծում տակավին բուրժուական կացութաձև, որովհետև քաղաքային արհեստագործությունն իր տեղը չէր զիջել տակավին մանուֆակտուրային կամ գեթ կապիտալիստական տնային արդյունաբերությանը, քաղաքների հարստության գլխավոր աղբյուրը կազմում էին գյուղացիության շահագործումը և միջազգային առևտուրը։ Այնուհետև ընկ. Աշ. Հովհաննիսյանը փորձում է պարզել այս դարերի անմիջական արտադրողի վիճակը, այդ բանի համար նա մատենագրական աղբյուրներից և քարոզներից բազմաթիվ փաստեր է բերում և ցույց տալիս, որ քաղաքային արհեստանոցներում բանեցվում էին ստրկագրված և ճորտագրված արհեստավորներ, սակայն այս գործատները չէին կրում կապիտալիստական տնային տնտեսությունների կամ մանուֆակտուրային ձեռնարկությունների բնույթ։ 13-րդ դարի մի քարոզգրքում հեղինակը թվում է հարստություն կուտակելու աղբյուրները։ Նա խոսելով աշխատող ժողովրդի կեղեքման մասին, չի մատնանշում արդյունագործ բանվորներին, այլ սոսկ վարուցանրով զբաղվող մշակների։ Միաժամանակ, հատկանշական է այն, որ հարստություն կուտակելու աղբյուրներ թվելիս այստեղ դերիշխում է դրբկանների առևտրավաշխառուական և ֆեոդալական բնույթը։ Այսպիսով, հիմք չունենք պնդելու, թե 12—13-րդ դդ. Հայաստանում տեղի ուներ կապիտալիստական կացութաձևի սաղմնավորում։ 13-րդ դարից ի վեր հայ առևտրականներից շատերը կրում էին «պարոն» տիտղոսը։ Հիշենք Հոնենցին, Սամադինին, Ումեկին և այլն, սրանք ոչ թե հնատիպ վաշխառուներ էին, կամ նոր բուրժուական հարաբերությունների արտահայտիչներ, այլ փողատեր «պարոնացած» ֆեոդալներ էին։ Սրանք ֆեոդալական նոր հարաբերություններին համապատասխանող նորատիպ ֆեոդալներ էին, որոնք հայկական քաղաքների ավագներ կամ փարթամ առևտրականներ չէին սոսկ, այլ կալվածատիրական և փողատիրական շահերով միաձուլման ճանապարհով նրանց միջից բարձրացած և նրանց վրա իշխող ֆեոդալական գագաթներ։ Ուստի Հայաստանում զարգացող ֆեոդալիզմի ընդերքում առևտրական կամ վաշխառուական կապիտալի առկայություն ենք նշմարում այնտեղ, ուր շատերը տեսնում են վաղ կապիտալիզմի կամ «վաղ վերածնության» կոնտուրներ և հաճախ տեսնում ենք ֆեոդալ ճորտատերեր ու ստրկատերեր այնտեղ, ուր ոմանք նշմարում են սոսկ վաշխառուներ ու առևտրական կապիտալիստներ։

Դիսկուսիայում հանդես եկան նաև ընկ. ընկ. Ա. Կարինյանը, Հ. Ստեփանյանը, Խ. Վեմյանը։

Դիսկուսիայի վերջում վիճաբանություններն ամփոփեց պրոֆ. Ար. Հովհաննիսյանը։ Դիսկուսիան, ասաց նա, նպաստեց մի շարք կարևոր պրոբլեմների նկատմամբ միասնական կարծիք մշակելուն։ Դիսկուսիային մասնակցող ընկերների մեծ մասը համամիտ են Հայաստանում ստրկատիրական ֆորմացիայի գոյության տեսակետին, բայց կան տարակարծիքություններ այդ ֆորմացիայի ժամանակագրական շրջանների վերաբերյալ։ Այնուհետև նա նշեց, որ 10—13-րդ դարերի սոցիալ-տնտեսական հարաբերությունների բնութագրման հարցը դեռևս բավարար չափով չի ուսումնասիրված և իր լուծումը կարող է ստանալ նոր նյութերի ուսումնասիրումից հետո։ Նա անհրաժեշտ համարեց այդ հարցերի մասին շարունակել գրավոր դիսկուսիան, ինչպես նաև հրավիրել Ինստիտուտի համապատասխան սեկտորների ընդլայնված նիստեր և քննության ենթարկել առանձին հարցեր։

Վերջում նա հայտնեց, որ մոտ ապագայում Պատմության ինստիտուտի դիրեկցիան կազմակերպելու է դիսկուսիա՝ նվիրված հայ ժողովրդի պատմության նոր և նորագույն շրջանի պերիոդիզացիայի հարցերին։

Վ. ՀԱԿՈԲՅԱՆ